ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

Երևան

Այսօր, 1978 թվականի լուսաբացին, հույժ հաճելի է Մեզ, հանուն հայ եկեղեցու և հավատացյալ մեր ժողովրդի, շնորհավորել Ձեր Նոր տարին ու ջերմորեն մաղթել մեր մայր հայրենիքին մշտատև հառաջդիմություն ու վերելք՝ ի բարօրություն հայ ժողովրդի, սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, միշտ խաղաղության պայմաններում:

Մաղթում ենք նաև անձամբ Ձեզ ու ձեր գործակիցներին արևշատություն ու անսպառ շինարար եռանդ Ձեր հայրենանվեր առաքելության ազնիվ նանապարհին:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին հղում ենք Ձեզ Մեր ամենաջերմ մաղթանքները, որ հառաջիկա տարին լինի հարատև շինարարության և վերելքի ժամանակաշրջան մեր մայր հայրենիքի համար, սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, աշխարհի խաղաղության և պետությունների համերաշխ գործակցության պայմաններում:

Հաճեցեք ընդունել նաև Մեր սրտագին բարեմաղթությունները Ձեր

քաջառողջության և անսպառ կորովի՝ շարունակելու համար Ձեր հայրենանվեր փայլուն գործունեությունը լի նորանոր հաջողություններով:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԵԾԱՐԳՈ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

Երևան

Հանուն հայ եկեղեցու և հավատացյալ մեր ժողովրդի շնորհավորում ենք Ձեզ Ամանորի ուրախ առիթով և մաղթում Ձեզ քաջառողջ երկար կյանք ու արդյունավետ գործունեություն մեր վերածնված մայր հայրենիքի վերելքի ու ծաղկման ճանապարհին:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Նոր տարվա առթիվ ինձ հղած Ձեր շնորհավորանքների համար հայտնում եմ իմ անկեղծ շնորհակալությունը:

Սրտանց շնորհավորում եմ Ձեր Նոր տարին՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն:

Ցանկանում եմ, որ 1978 թվականը լինի սովետական հայրենիքի և ժողովուրդների բարեկամության բարգավաճման, խաղաղության և խաղաղ համագործակցության տարի:

Բ. ՍԱՐԿԻՍՈՎ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ամանորի առիթով ընդունեցեք մեր սրտաբուխ շնորհավորանքները:

Թող 1978 տարին բարգավաճում բերի մեր հայրենիքին և Ձեզ համար լինի քաջառողջության և բեղմնավոր գործունեության արգասավոր տարի՝

ի շահ ժողովուրդների բարեկամության և խաղաղության ամբողջ աշխարհում:

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Նոր տարվա առթիվ ընդունեցեք մեր սրտանց և ջերմ շնորհավորանքները: Ցանկանում ենք Ձեզ բաջառողջություն, երկար տարիների կյանք, հաջողություններ Ձեր ազգային և հայրենասիրական գործունեության մեջ:

Թող 1978 թվականը լինի սովետական հայրենիքի հետագա բարգավաճման, ամբողջ աշխարհի ժողովուրդների խաղաղության և բարեկամության տարի:

Ա. ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան